Տեղեկատվական հարցումների վիճակագրություն

2020թվական

2020 թվականի ընթացքում ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն					
	Ընդամենը	Բավարարված	Մերժված*	Մասնակի մերժված**	Վերահասցեագրված
ՀԱՐՑՈՒՄ	110	109	1	1	

Մերժման հիմքերը (ամբողջական և մասնակի)	պետական, ծառայողական գաղտնիք	Բանկային և առևտրային գաղտնիք	անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիք	հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ	հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքների պաշտպանություն	բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք
ԸՆԴԱՄԵՆԸ			2			

Լրացուցիչ տեղեկատվություն

2020 թվականին ՀՀ Կոտայքի մարզպետարան տեղեկություն ստանալու հարցմամբ դիմողների թիվը կազմել է 110

- Հասարակական կազմակերպություններ – 32 հարցում, որից 13-ը տվյալ կազմակերպությունը ներկայացնող լրագրողների կողմից
- Քաղաքացի – 31 հարցում
- Զանգվածային լրատվամիջոցներ – 10 հարցում
- Տարբեր գերատեսություններ – 37 հարցում:

Տեղեկություն ստանալու հարցմամբ դիմած ***լրատվամիջոցներն են՝*** Թերթ.էյեմ-ը, Անտիֆեյք.էյեմ-ը, Հայկական ժամանակը, Հետք, Նյուզ.էյեմ կայքերը, Սիվիլնեթը, ինչպես նաև ազատ լրագրողներ ու ԵՊՀ ժուրնալիստիկայի ֆակուլտետի ուսանողներ:

Տեղեկություն ստանալու հարցմամբ դիմած ***հասարակական կազմակերպություններն են՝*** «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն, «Ուրբանիստա» մեդիա հարթակը, «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ-ն, «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՀԿ-ն, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեան», «Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը» և այլն:

Տեղեկություն ստանալու հարցումները վերաբերել են տարբեր ոլորտների՝ կրթության, առողջապահության, իրավական, սոցիալական, հողաշինության, քաղաքաշինության, համայնքային, ինչպես նաև մարզպետարանի գործունեությանը վերաբերող:

Բոլոր հարցումներին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ու ժամկետներին համապատասխան տրվել են անհրաժեշտ պատասխաններ ու պարզաբանումներ:

Հիշեցում

Մերժում են համարվում այն պատասխանները, որով տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել իր տնօրինության տակ առկա տեղեկությունը՝ համաձայն ՏԱ մասին օրենքի 11 հոդվածի: Օրենքով սահմանված կարգով մերժումը համարվում է լիարժեք պատասխան:

Մասնակի մերժում են համարվում այն մերժված հարցումները, որոնցով տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել ոչ թե պահանջվող ողջ տեղեկությունը, այլ դրա միայն մի մասը: